

Սոր Վիրապ Վանուց որպիսութիւնք: *)

Դայեակ՝ անուցիչ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին Մերոյ, Աթենական դրախտ և Մայր Եկեղեցեացն Մեր Ազգայնոց, Սրբացուցիչ Վանքն Սոր վիրապայ, ի դաշտին արտաշատու մերձ Դուին հին թագաւորանիստ և կաթողիկոսարան քաղաքի, որ այժմ է աննշան գիւղիկ մի, ևս տուին անուամբ, և գաւառն կոչի գառնի պասար:

Ի վերայ ձուածն բարձրաբերձ լերան միոյ է կառուցեալ սրբատաշ գեղեցկածն հոյակապ բարձր պարսպաւոր վանք մի, երկու եկեղեցեօք: Առաջինն ի վերայ սուրբ վիրապին Լուսաւորիչ անուամբ. ի ներքոյ սոյն եկեղեցւոյ է Հոգևոր ծնօղ և սուրբ յարգանդ Վիրապն այն, որ այլ մարդիկ յորովայն ծնողաց իւրեանց միայն յինն ամիս բնակելով՝ ծնօղքն կոչեն Մայր, և ծնեալքն նոցա՝ գաւակ:

Իսկ սուրբ Լուսաւորիչ Հայր մեր ըստ քրիստոնէական հաւատոյ՝ Տասն և հինգ տարի ի Մէջ այս սրբացուցիչ Վիրապին, անխնամ ի մարդկանց բնակելով՝ զարգացաւ եօթն արփեան Աստուածատուր շնորհօք, և իբր նորոգ ծնեալ ի նմանէ, կոչեցաւ նա մեզ Հայր, ուրեմն շնորհաց պահարան և ծնօղ նորա, է իսկապէս Մայր Հաւատոյ մերում Ազգի:

Այս սուրբ վիրապ ըստ պատմութեանց և աւանդութեանց, ի սկզբանն յոյժ խոր լինելով՝ կոչիւր յայլ ազգաց՝ գլոք այագ, այսինքն քառասուն աստիճան խորութեամբ, յետոյ ի 641 ամի Տեառն Ներսէս շինօղ Հայրապետն բարձրացուցեալ գյատակն կիսով չափ, այժմ իջանեն քսան և մի աստիճանօք:

Ի խորափտին կազմեալ սեղան սուրբ Լուսաւորիչ անուամբ, ուր ի հանդիսի աւուրցն անդ ի վիրապին մատուցանէ պատարագ որպէս բաղդաւորութեամբ և մեք ի 1829 թուին, յաւուր մուտն ի վիրապին մատուցաք զայն պաշտօն, ուրանօր կան չորս խարիսխք սեանց, և տեղւոջ նոցին, աւանդի ամփոփիլ նշխարաց Լուսատուին մերոյ:

Ի վերայ այս սուրբ վիրապին ևս չափաւոր եկեղեցի խորանաւ ևս յանուն սուրբ Լուսաւորչի հոյակապ կառուցեալ կայ: Ի Հիւսիսային կողմանէ ի մուտ դրան տաճարին է և վիրապ մի հինգ աստիճանի խորութեամբ հոյակապ, ըստ պատմելոյ Յօհաննէս կաթողիկոսի 661 ամի, ի վախճանել նոյն Ներսէս շինողի, անդ յերկրորդ խորափտին թաղեցեալ կայ մարմին նորա:

*) Տես «Արարատ» 1913 թ. Նոյեմբեր-Դեկտեմբեր, էջ 866—904:

Երկրորդ եկեղեցին մեծաշէն գմբէթաւոր գեղեցկացիր պայ-
ծառ տեսլեամբ, սուրբ Աստուածածին անուամբ սրբազործեալ,
սալայատակ:

Խուցքն փոքերք, կրօնաստանք՝ քարաշէնք, կամարաձևք,
արտաքոյ պարսպին հիւսիսակողման է վիմաքար մի մեծ առանց
կոփելոյ: Մուրճ չէքեճի՝ ձևացեայ կայ Խաչ. աւանդութեամբ
հասեալ ցայսօր ժամանակի, թէ ի սկզբան քարոզութեան սրբոց
Առաքելոց Թադէոսի և Բարդուղիմէոսի պատահեալք միմեանց
աստ՝ Մատամբք իւրեանց ձևացուցեալ են զխաչսն զայնոսիկ ի
վերայ նոյն վիմի, իբր դաշնադրութիւն իրերաց, և սեպհակա-
նութեան վիճակաց. վասն որոյ ըստ նախատեսութեան Աստուծոյ
անդանօր պահպանեցաւ ոսկին սուքիրայ երիս հնգեակ ամս, և
ելից զգուշակութիւն Առաքելոցն Սրբոց ի յղութեան առ ճանա-
պարհայն ի սուրբ դամբարանի նոցին ըստ Զննորայ և այլոց:

Արժան և իրաւ կոչել զայս դաշտ բլրաւս՝ տեղի պատժա-
պարտից, քանզի մինչև ցայսօր քարափիք և դաշտք նորին լի են
փնասակար զեռնօք, օձիւք, քարբովք, մանաւանդ խոշորաձև մօ-
ծակօք, ընդ ապականեալ օդոյ, և հեռաւորութեան ջրոյ, որք
երկու վէրս բացակայութեամբ յեարասիս գետոյ, գրաստիւք յա-
մառն և ի ձմեռն բերեն որպէս վանականք, նոյնպէս և առննթեր
իւր եղեալ տաճիկ գիւղական զջուր ի պիտոյս:

Բայց գտանեն ի դաշտ սորին յամսեանն մայիսի և յունիսի
յաճախ որթունք գեղեցիկ զրմըզ կոչեցեալ ներկի կամ պօեայի,
որպէս ի 1830 ամի ծաղկարար Սահակ եպիսկոպոսն զփորձն
ծանուցանելով նախարարաց, խիլահեցաւ ի Տէրութենէն Ռուսաց
ռոճկաւ և պատուով: Յամայի էր դաշտս, բայց այժմ գաղթակա-
նօք գիւղօրայքն եղեն բազմամարդք և դաշտքն արօրադրութեամբ
սկսան ծաղկիլ և պտղաբերիլ:

Բանք Դեսպանի նաւր Շահին:

Յաւուրս խորխտ իշխանութեան նատր Շահի, առաքի ոմն
Դեսպան ի դուռն Օսմանեան տէրութեան, պատուով ընկալեալ
յիշխանաւորաց և ի Մինիստր ըրըճալից: Յաւուր միում ի խրա-
խութեան, ոմն ի խոհական Մեծամեծաց՝ սակս զուարճախօսու-
թեան հանդիսին, և գուցէ ի գովեստ իւրեանց փառաշուք կենցա-
ղավարութեանց, և իբր իմաստուն կառավարութեանց զվկայու-
թիւնս որսալոյ վասն, ասէ. (էլլի պէկ՝ պէկէնտին մի պիզիմ
ըստամպուլայ) պատասխանէ խոհական զեսպանն: Ըստամպուլա-
տայ պէկէնմէմէք օլուր մի, ագար մէմլէքէթլէրի փատիշանլըզն
իգմըզսընըզ, պիւր շէհիր ըստամպուլու եափմըզսընլզ, օնատայ
նիճէ պէկէնմէյիւրմ այսինքն զբոլոր Տէրութիւն ձեր աւերեալ

մէկ քաղաք միայն շինեալ էր: Թուի թէ հարցանօղք առաւել ամօթապարտ, քան թէ ուրախամիտք եղին արդեամբք գործոց իւրեանց:

Այսպիսի զգուշութեամբք պարտեն հայիլ Աղգին մերոյ խոհականք, նախ ի կոնդակագիրս օրհնութեանց, ուր գրեն ի դրանէ Սրբոյ խոր վիրապայ, Հոսիսիմեանց, Գայիանեանց, Շողակաթ, եւ ի արբոց Մասանց, ի կենաց փայտէ, ի կողամուխ գեղարդէ, և ի Սրբոյ Աջէ Լուսաւորչին, Սրբոյն Յակոբայ և այլոց:

Երկրորդ ի քարոզութենէ եպիսկոպոսաց, նուիրակաց, և ժողովարարաց, թէ սուրբ Աթոռն, և այն վանորայք ձեր հոգւոյ տունն են, բազմութիւնք միաբանից ձեր կենդանեաց և ննջեցելոց Սաղմոս ասաց՝ աղօթաւոր ժամ պատարագ մատուցանողք են:

Երրորդ բարեպաշտ ջերմեռանդ ուխտաւորք, որք գնան և վերադարձեալ գովեն զՍեղանատան բազմութիւն հացակերաց, դիսպոսաւոր հանդէս Հայրապետի, զլիութիւն սենեկաց եպիսկոպոսաց և գործակալ վարդապետաց, զՂուի ալգին ընդ այլ այգեաց և պարտիզաց, յորս շրջեալք են: Նախ ըստ բանի կոնդակաց՝ քննել և խելամուտ լինել, թէ այն նշանակեալ վանորայք, կան ի շինութեան և յազգաօգուտ պիտանութեան, գոնէ սաղմոսերգութեան, պաշտաման և պաղատանաց, թէ աւերակք են, և բունք Արազիեաց: Զի թէ աւերակք, ո՞վ զնոսա աւերեաց: Որպէս գիտեմք և գրեմք յուսամք և ոչ այլ ազգ կարեն ջատագովքն ցուցանել ըստ օրինակի պարզ միակին, ըստ որում մի է և ճշմարտութիւն:

Ամենայն ուսումնատէնջ Հայրենասէր անձինք, ոմանք ի պատմագիրսն Թափառեսցին, և այլք ցծանօթ ծերսն հարցցեն, և նոքօք խելամուտ գտցեն, թէ զկնի Լանկ Թամուրին, և Ճալալիներաց յափշտակութեանցն, այլ որքան խռովութիւնք և պատերազմք որք եղին Յարեւելեան աշխարհ յերբ կամ յորոց Յիշեալ վանորայքն մեր, որք են, Խորվիրապ, Ակուռի, Սուրբ Գեղարթ, Յօհաննայ վանք, Սաղմոսավանք, Մուղնոյ սուրբ Գէորգ, Գայիանեանեանց, Հոսիսիմեանց, և Շողակաթին, նոյնպէս և այլ մերձակայ վանորայք Աթոռոյն, յափշտակեցան յօտար թշնամեաց: Այլ միշտ և հանապազ յիշեալ վանորայք, և այլ մերձաւորք, յափշտակեալք են և յափշտակեն ի սուրբ էջմիածին Աթոռոյն և Աթոռային Սրբազան Հայրապետաց, Արք եպիսկոպոսաց և ի վարդապետաց հետեւել բարեպաշտութեամբք:

Յորժամ զգան Սրբազան գահերէցք Աթոռոյն զշշունջ պատերազմական խռովութեանց, առաքեն զելուզակս իւրեանց զընթիկ հարազատ որդիս Աթոռոյն զնորակիրթ արեղայս, առ յիշեալ վանորայս ի խրատել զնոսա, թէ համբաւք պատերազմաց կան, փութացեալ ժողովեցէք զոչխար, զեզն, զձի, ջորի և զհայր նոցա, հասուցէք ի սուրբ Աթոռն պահպանել ի հաւատարիմ տեղոյն:

Յետ նոցա զան հմտագոյն աւարառու հին աշխատաւոր միաբանք, թէ մերձեցան թշնամիք, պարտիք զամենայն զգեստ, դարթ և զսրբութիւնսն ժողովել և տանել յաթոռն, օգնական լինելով վանահօրն, ժողովել, կապել, կարգաւ տեղաւորել և կնքելն թողուն կամաց և յիշխանութեան վանահօրն:

Իսկ զականաւոր պիտանիս, թեթեաքեռն ծանրագինս, ցաւակցութեամբ ողորմելի վանականացն, Սրբազան վերակացուքն ամբարեն ի հաւատարիմ խուրճինս իւրեանց սպասաւորաց, և սոյնանման հաւատարմութեամբ երբ զկենդանիս և զանօթսն ժողովին յանելանելի շտեմարան և ի դարան Մայր Սուրբ Աթոռոյն: Ապա հոգացող լինեն նոյն աւարեալ վանուց Միաբանութեան ամենաողորմածաբար տալով նոցա հրաման, զնալ ի մերձակայ յապահով զիւղ և ի քաղաքս, գտանել ապրանս կենաց իւրեանց: Եւ յորժամ վախճան այն խռովութեան և պատերազմի հղիցի, վանահարք և Միաբանք յիշեալ վանորէիցն, որոց աչք ի գլուխս իւրեանց են, բարձրանան Աթոռային գործակալութեամբք, և նոր արեղայից յանձնեն ամայացեալ վանուց մուրացիկ կառավարութիւն, այն վանահայր, որ պարտ էր լինել պահանջող յանձնեալ շարժական և անշարժ կայից վանուցն, այժմ կաշառեցաւ այլ գործով. խրատտու լինի նոր արեղայ անփետուր միաբանին, թէ Աստուած շէն պահէ զհայոց ազգն. գիտեն ամենեքեան զայս խռովութիւն և պատերազմն, որով բոլոր երկիր մեր, փախեան և թաւանեցան, գնացէք անվնաս կողմունսն, և նոքա օգնական լինին ձեզ, և ժողովէք առաւել քան զառաջինսն:

Արդ ժամ է կշռել խոհական ազգասիրաց, թէ այս եղանակ կառավարող գահերէց վանականաց, զիմրդ ոչ լինի Մայր Աթոռն փարթամ և պայծառ, որպէս զկոստանդնուպօլիս, և այլ վանորայք, ըստ վկայելոյ դեսպանին պարսից, բնակարան բուռց, Արագլեաց բարձրաբերձ պարսպօքն, ընդունարան պաճարեղինաց, ամրակառոյց հոյակապ շինուածովք անդուռն և անմարդաբնակ լինելովքն:

Փոքր են այն եղանակ թալանք վանորէից, երբ հրամայի նոր արեղայից աւելածու լինել այն վանորէիցն, յատկացեալ Մասունք սրբոյն ոչ առաքեն ի տեղիս, այլ ամենայն կան և մեան յԱթոռն: Այս է ճշմարտաբանութիւն օրհնաբեր կոնդակի իւրեանց, որք ի յանդորր ժամանակի, նոր մուրացողութեամբ վերակացու արեղեացն ի բարեպաշտ ժողովրդոց ի զիւղականաց, և ի քաղաքայնոց, յարանց և ի կանանց, մանաւանդ յայրեաց և յորբոց, ըստ որում հոգեբաժին անուամբ, յոմանց յօժարութեամբք, և յայլոց հարկիւ և բռնութեամբք, առնուն. ըստ տեղոյն և ըստ կարեաց, զՏուն, զկրպակ, զԱյգի, զՊարտէզ, զէզն, զկով, զոչխար, կարպետ, խալի, սփռոց, և հանդերձ. զոր ինչ գտանեն մնացեալ

ի հանգուցեալն և կարողանան առնուլ, սիրով և բարեհաճութեամբ իւրացուցանեն յանուն վանուցն, որոց վասն շրջին ի ժողովեչ առանց խնայելոյ յետնամնաց սրբոց հանգուցելոյն, զի ուղիղ լիցին Բանք կոնդակագրութեանցն թէ Աթոռն և վանորայք, ձեռ հոգւոյ տունն են. և թէ երանի որ ունիցի յիշատակ ի Սիօն, եւ այսպիսեաւ գումարեալք, ի շարժիլ ևս խռովութեանց պատերազմի, արագարագ ժողովին, յանել դարան սուրբ Աթոռոյն:

Երկրորդ քարոզութիւնք նուիրակաց և ժողովարարաց, որք յուսացուցանեն զբարեպաշտ անձինս, թէ սաղմոսասացք, ժամ, պաշտօն, և պատարագ մատուցանեն ի մէջ Աթոռոյն, և յայլ վանորայս ի մերձակայս նորին:

Երանի թէ յայտնի լինէր լուսաւոր անձանց մերազանց, թէ անխափան պաշտօն պատարագ վասն կենդանեաց և ննջեցելոց, առաւել յիւր եղեալ քաղաքն և ի գիւղն լինին, քան թէ ի հեռաւոր վանորայս:

Եւ թէ ճշմարիտ խորհուրդ պատարագին, միևնոյն են Մատուցեալք ի մէջ գիւղի եկեղեցւոյ, ի մէջ էջմիածնի, և յերուսաղէմայ, թէ ի ձեռն Սրբազան Կաթողիկոսի, Պատրիարքի, Արքեպիսկոպոսի, վարդապետի, և զեղջուկ ջերմեռանդ քահանայի, քանզի Պատարագն ըստ ինքեան Արեգակն է անաչառ, Մագոյ ի վերայ բարեաց և չարաց, անարժան ենթակայք պատժին ըստ յանցանաց:

Երրորդ՝ վերադարձեալ ուխտաւորք, որք գովեն զսեղանատունն բազմութեամբ հացակերաց, և այլոց որք ի վերայ նշանակեցան:

Քննելի է և այս, թէ մինչ ի վախճան Երևանցի Սիմէօն Կաթողիկոսին, թերևս այլ պակաս հացակերք էին յաթոռն, քան զկնի նորա: Արդ, յաւուրսն յառաջնոց, թէ պրեալ մատենիւք, և թէ երևելի գործառնութեամբք շինութեանց և ազգաօգուտ ներգործութեանց, հետզհետէ յառաջածեալք են անձինք պիտանիք, որպէս յէջմիածին, նոյնպէս յերուսաղէմ և ի սուրբ Կարապետն Տարոնու: Իսկ ի Կաթողիկոսէն Ղուկասու ցարդ՝ բազմութիւնք սեղանատան հացակերաց, Հրդեհիչ ծրծումբ և լուցկիկք են Աթոռային բարեկարգութեանց, յորոց չև է տակաւին ակն կալել ծագման յուսոյ բարեխաւութեան խորհրդաւոր մտօք նկատողաց:

Բայց արտաքին երևելի նշանացն, ճառագայթիւք, խտղեն աչք անտես տեսանողաց, որք ի նախնի հարց ոչ էին մտաբերեալք, այժմ արժանք և անարժան փառաշուք փայլեն ի հանդէս բազմութեան արանց, որք զամենայն եկեղեցիս, եկեղեցականօքն նուաճեալք, ըստ բանի պարսիկ դեսպանին, մի և եթ վանք մի են շքաւորեալ հացակեր անձամբք, որ կոչի Աթոռ:

Զառաջին Հոգացողութիւն մեր վասն Խոր վիրապայ:

Օրինական Պարսից Դեսպանի բանին վասն Կոստանդնուպօլսոյ թուի թէ պարզապէս ծանուցաւ հարուստ պայծառութիւն Աթոռոյն, և ամանացեալ աղքատութիւնք այլ վանորէից:

Այլ մեր վերադարձեալ յէջմիածին, ցաւակցաբար ծանուցանելով զողորմելի տեսիլ Ազգային պարծանաց Տեղեացն, խնդրակեղէ ի Հայրապետէ և ի Սինօթական Հարց, Վասն սրբոյ Խորվիրապին, յանձնել ինձ զհոգածութիւն նորին յատկացուց մամբ վաղեմի վիճակի՝ ըստ ցուցանելոյ Զամբռ ասացեալ Մեծագոյն Մատենին, ի Սիմէօն Կաթողիկոսէ կարգադրեցելոյ:

Ի շնորհուկս խոստանան, և ի խորհուրդս ակէտանջին, թէ զիարդ թողցուք ի բացուստ եկեալ առն օտարականի լինել խնամածու վանուցն Խոր վիրապայ: Զպատիր քաղաքավարութեամբ պատրելոյն զմեզ առաջարկեն այսպէս:

Սուրբ Աթոռս այժմ մեծ հարկաւորութիւնս ունի ձեզապիսի գործունեայ, և հաւատարիմ առն. եւ ի մեզ բազում պակասութիւնք են ներսնային կառավարութեանց, մանաւանդ որ փոխարկութիւն եղև Տէրութեան և Իշխանութեան, Մեր ոչ գիտեմք զեղանակ Եւրոբիական կարգաց և կառավարութեանց: Ուստի խնդրեմք զի կացցես դու առ մեզ և յԱնուն քո Արեղայի միոյ յանձնեսցուք զայն վանք, նա կամաւ և հրամանաւ քով կառավարեսցէ, և դու առ մեզ լիցիս հանապազ, ըստ որում գիտեմք զպիտանաւորութիւն քո Սրբոյ Աթոռոյս:

Զի թէև ակներև բացայատ էր առ իս հոգիք և բանք նոցին, բայց ըստ կամս նոցա գնալ, հարկադրէր ինձ ժամանակն դարձուածովք իւրովք:

Քանզի ներսէս Արքեպիսկոպոսն իբր անակնուռնելի վերագարձմամբ հեռացեալ էր անտի, առաջին չըղջիկքն, զառիւծական հոգի զգեցեալք, նոր նոմոսատու օրինադիրք ձևանային, վասն որոյ զիջաք ի կամս նոցին, որպէս ի հետևեալսն տեսանի:

Ժողովեալ Սինօթական հարց, քննեալ զԶամբռ ասացեալ Մատենան, որ յանուանէ ցուցանէ ամենայն վանօրէից զթէմ և զվիճակ նոցին: Տեսին խնամակալքն վանօրէիցս, թէ ի նորոգ եկեալ զաղթականաց, նոյն անուամբ գիւղքն Խոր վիրապին, աւելի մարդարնակք եղեալ են այժմ, խղճահարութիւն համարելով զիւր սեպհական գիւղ և վիճական իւր ինքեան տալ. կիսով չափ քարձին զգիւղսն, միայն զջուր գառնուոյ սահման եղեալ, ընդ Ակուռեաւ ի ներքին կողմանց գետոյն, յորս պարփակին քսան գիւղք մեծ և փոքերք, և ի նոսա ութն հարիւր տնուորք մերադ-

նեայք աղքատք և հարուստք բնակիչք և թէմք խորվիրապի յատկացան:

Ի 1828 և ի հոկտեմբեր ամսոյն գրեցաւ կոնդակ այսպէս. «Առաջնորդ Վանուց և վիճակի Սուրբ Խորվիրապի Մանուէլ վարդապետն. Կիւմիւշխանացի: Վանահայր և փոխանորդ Վէթիլ նորին Սիմէօն վարդապետ Երևանցի:

Այս ունակ խնամակալութեամբ, իբր զխորվիրապն յանձնեցին մեզ՝ Անցեալ հազարաւոր ամաց ժողովեալ և ունեցեալ զարթուց և զգեստուց, որոց յիշատակքն գրեալ կան Խորվիրապ անուամբ և ոչ մին ի նոցանէ ետուն յիշեալ իբր վէթիլին մերոյ. այլ միայն յօդաւոր անուն մի, ամայի, անընակ, և անպատրաստ յամենայն կարևոր հարկաւորութեանց: Մինչ զի ի գնալ Վանահօրն անդ, ոչ գոյր խուց յերեկ օթելոյ. ոչ սպասաւոր ճըրագ վառելոյ ոչ փայտեայ, կամ կաւեայ աման կամ բնակ ջուր ըմպելոյ:

Յորոց պարտաւորեալ նոր վանահօրն ի գիւղորայս վիճակին անցուցանէր զաւուրս ձմեռայնոյն, և հոգայր զհարկաւոր նիւթոց պատրաստութեան առ ի ձեռնարկել զարնանային շինութեանց: Եւ նոյն ողորմելի վանահայր Սիմէօն վարդապետն, փոյթ առ փոյթ զայր յԱթոռն առ մեզ՝ զի կարասցուք մեք միջնորդութեամբ, ի գահերէց Հարց հրաման առնուլ գոնէ քանի ինչ ի հարկաւոր զարթուց և զգեստուց վերադարձուցանել առ նոյն վանք: Բայց մեք երկար փորձիւ հմտացեալ բարուց և կամաց նոցին, զարձուցաք զակնկալութիւն մեր առ վաղածանօթ բարեկամսն մեր յերկիրն Ղրիմու. եւ գրեալ նախ՝ առ գերագնուուհի Մարիամ Աղաճանոցիայն, որ է Տէր Ազամաթ գիւղի և կալուածոց նորին, որոյ Այրն բոլբոջիկ գերագնիւ Միգիթ Իւվանիչ Աղաճանոցի յառաջագոյն վախճանեալ՝ Միակ Դուստր էր սորա Հոփուսիմէ անուն: Գրաւոր ծանօթութեամբ յայտնեցի բարեպաշտութեան Սոցա Մօր, և դստերն, զաւերութիւն և զամայութիւն այնոցիկ Ազգային պարծանաց վանօրէից:

Երկրորդ առ Ղարասուի բնակիչ վաճառական յԱմասիացի Յօհաննէս Մխիթարոջն, զի որպէս խորվիրապին, նոյնպէս Գայիանեանց, Հոփուսիմեանց, և Շողակաթի վանորէից, դրունք, պատուհանք, և խաչկալք քակտեալ, աւերեալ և այրեցեալք էին. խնդիրք մեր առ բարեպաշտութիւն սոցա ի բացուստ ևս գտեալ գտեղի իւրաքանչիւրքն հարիւր յիսունական, այսինքն երեք հարիւր ոսկի Օլանտիոյ փոշտիւք հասուցին առ իս յէջմիածին:

Եւ մեք ըստ կարեաց մեր հետևութեան, երկու խաչկալ փորածու ջորէք ծաղկեալ ոսկէ թիթոամբք, երկու դուռն, տասներկու կաթուղիկէի պատուհանաց պարագայք, նոյն խորվիրապին, երեք խաչկալք և յիշեալ վանորէից, այսինքն Գայիանեանց,

Հովսիսիմեանց և Շողակաթին, ձեռամբ Կատեպանեան Յովսէփ վարդապետի շինեցուցաք: Եւ զայլ յիշատակիս ի Սեան կղզին թողաք, որպէս կարգ բանին ցուցանէ. բայց աստ գրի օրինակ Յովսէփ վարդապետի գրոյն: «Յամի տեառն 1829 յապրիլի 28 ի ս. Էջմիածին, ձերունազարթ Մանուէլ վարդապետ Հայրն իմ ետ մեզ յաղագս սուրբ Շողակաթի վանից խաչկալի մասին երկու հարիւր քառասուն և վեց մանէթ, և չորս մանէթի փայտ յաղագս նորին, այնու մասին ետ մեզ, զի և մեք աշխատեսցուք ըստ կարեաց հոգկալիւ շինել տացուք Տեառն զօրութեամբ, վասն որոյ զայս միամտական թուղթ մեր տուաք ինքեան այնու մասին, զի յաղագս վերոյիշեալ դրամին միամիտ լինիցի: (խսկական գրեցեալ է) Վեհապետեան Յովսէփ վարդապետ կաւալէր: № 124.

ԱՆՃԱՄԱՃԱՅՆՈՒԹԻՒՆԲ ԳԱՏԵՐԻՑԱՆԵ ԱՆ ԺՈՂՈՎԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԷՋՄԻԱԾՈՒՆ:

Առաժ է ընդհանրապէս, Եզիպտացւոյն զՄորթ և Ազուաւոյն զորակ իւր թողուլ է մին յանկարեորաց:

Զի թէպէտ Մինչ Արքեպիսկոպոսն էր հայոցն ռուսաստանու Սրբազանն Եփրեմ, յիշելով զմիակի կառաւարութիւն Ղուկաս Հայրապետի, և այլոց ղժգոհութեամբ նախատէր զեզական կամօք վարելն նոցին զիշխանութիւն, վասն որոյ ըստ յաւիտենական փառացն արժանաւոր Վեհազն Աղայ Մինաս Լազրիչի, յորդորանօք, հրամանցին նուաստութեան իմոյ ի ս. Պ. բուրգ ի 1803 թուի, Գանի հարկաւոր պարբերութիւնս ժողովեալ ի վերայ թերթից, զի գիտել կարասցեն ի ձեռն նոցին զայլ պարագայս բարեպէս կառավարութեանց հոգևորական անձանց:

Մեք յարգելով զՀրամանս Սոցա, ի փորձառութեանց ծանուցելոցն մեզ քառասուն և երկու պարբերութիւնս գրեալ ներկայացուցաք վեհանձնութեան նոցին: Եւ ինքեանք կրկնակրկին սրբագրութեամբ, հարկաւորացն յաւելմամբ, և յաւելորդացն բարձմամբ, ցուցակ մի յօրինեալ, գրաւոր առաջադրութեամբ առաքեցին հասանիլ առ Սրբազան Դանիէլ, ի ձեռն յայնժամ ի Թիֆլիզ գտանեցեալ վաթսունաչափ միաբանից, ըստ ցուցանելոյ 35 թղթահամարին, զի և նորին վշտակիր Վեհապետութիւն, Հայրապետական իշխանութեամբ հաստատեսցէ զարժանաւոր Սիւնհոդոսական կանոնադրութիւն մի վասն սուրբ Էջմիածնի, զի յետ այնորիկ Հայրապետք, ըստ առաջնոյն եզակի կամեցողութեամբ, մի երբէք կառավարեսցեն զԱթոռն Աթոռայնովք, այլ խորհրդով և համակամութեամբ Սիւնհոդոսական ժողովոյն եղիցին ամենայն իրականութիւնք նոցին:

Որպէս և նորին ի բովս քննեալ վշտակիր Սրբազնութիւն ի Մարաղայէ յաքսորանաց տեղւոյն ի 1805 թուին, կտակօրէն աւանդութեամբ հաստատեալ զկանոնադրութիւն ժողովոյն իւր կոնդակագրովն վերադարձ առաքէ յիշեալ ժողովն Թիֆլիզու, վարել նոյն կարգադրութեամբ այժմ և յապայն:

Որով ուրախութիւն եղև յայնժամ եփրեմ Սրբազան Արքեպիսկոպոսին մերազնէիցն Ռուսաստանու Վեհազն Տան Հազրեանց, և ի Թիֆլիզ գումարեալ Միաբան ժողովոց, որք Մատուցին ևս առ Տէրութիւն Ինաստրանի Վալիկն զկանոնադրութիւնս Սրբազանին Դանիէլի, զի Հաստատեսցի և կայսերական իշխանութեամբ:

Սակայն յետ վախճանի Սրբազանին Դանիէլի ի 1810 ամի ի յաջորդել զԱթոռն նոյն եփրեմ Սրբազանին, որպէս տեսանի ի 48 թղթահամարին,*) ի բաց թողեալ զբաղմամեայ խորհեալ զբարեկարգութիւնսն, հասուցին զաթոռն յետին ողորմելութեան, ևս եզակի ինքնակամ կառավարելով: Մինչ տակաւին ի նոյն կուտակեալ պարտուց յայնժամ ևս, ութն հազար թումանք անվճարք կան:

Միայն տեղական հեռաւորութիւն ներսէս Արքեպիսկոպոսին բղխեաց զհամարձակութիւն, որպէս եփրեմ Սրբազանին, նոյնպէս և այլ Գահերէց Հարց, անցնիւրքն եզական կամօք լինել իշխան և ըստ հաճոյս հրամանատարք անդուռն ել և մտիւք:

Քանզի պարսկասոյց խորամանկութեամբ տեսին, թէ Միաբան հետևողութեամբ, սպառումն լինի պարտուց, և ոչ մնան առարկայք ինքեանց նոր մուրացողութեանց: Զգերազանցն օգտակար շահուց իւրեանց խորհեցան զխորհուրդ, զի և զՏէրութիւն ունել կարասցեն պարտուց իւրեանց վկայս, առ ի հօր զօրութեամբ աւարել զազգն ի ձեռն նուիրակաց, Առաջնորդաց և այլ գործակալաց:

Զի ոչ եղեն հոգածուք յարդեանցն տալ զպարտսն, որպէս ետուն զերկրորդ անգամ զչորս հազար թումանն, 58 երեսի,**) Այլ ըստ առակին, երես առնօղն աստառ ևս կուզէ, միջնորդութեամբ կուսակալաց՝ պարտք խնդրեցին յԱմէն ողորմած Կայսերութենէն Քսան հազար Մանէթ, ոչ զիտելով թէ այս լինի ինքեանց ձկնդեղ, որ ի տեղւոյ իւրում ինքնին գայ ի յայտ:

† Բ. Վ. Ա.

(Շարունակելի)



*) Տես «Արարատ» Նոյեմբեր-Դեկտեմբեր, էջ 879.

**) « » » » » էջ 888.